

© Beate Frenzel, Gülşah Mavruk (2018)

## Ուղեցույց նոր ներգաղթած աշակերտների հետ առաջին հարցազրույցն անցկացնելու համար

### Մեկնաբանություն հարցաթերթիկի վերաբերյալ

(Armenisch – Übersetzung durch externen Anbieter)

Սույն հարցաթերթիկը նախատեսված է որպես հարցազրույցի անցկացման ուղեցույց և հիմնական տեղեկատվություն այն ուսուցիչների միջև ընդհանուր փոխանակման համար, ովքեր անցկացնում են ընդունելության հարցազրույցներ նոր ներգաղթած երեխաների ու պատանիների հետ:

Նման ընդունելության հարցազրույցների դեպքում պետք է ի նկատի ունենալ, որ դրանք ծառայում են միայն առաջին կողմնորոշման կամ ուսումնական խմբերում ընդգրկելու համար, և դրանց ժամանակ դպրոցի կազմակերպչական աշխատանքների տեսանկյունից հետաքրքրող ոչ բոլոր հարցերը կարող են պարզաբանվել: Այս սահմանափակումը վերաբերում է մասնավորապես այնպիսի թեմաների, ինչպիսիք են ընտանիքը, փախուստը և կացության կարգավիճակը, որոնց մասին խորը հարցադրումները հոգեբանորեն տրավմայի ենթարկված աշակերտների մոտ կարող են անցյալի հիշողությունները վերակենդանացնել: Ֆինանսավորման հարցերը, որոնք էական են լրացուցիչ դասաժամեր ստանալու և կրթական ու վերապատրաստման միջոցառումների մասնակցության համար դիմելիս, նույնպես պետք է քննարկվեն միայն այն ժամանակ, երբ կատեղծվի վստահության մթնոլորտ ուսուցիչների,

աշակերտների, ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների, ինչպես նաև սոցիալական աշխատողների միջև:

Հարցաթերթիկի առանձին առանցքային կետերը պետք է ձևակերպվեն և համապատասխանեցվեն (ապագա) աշակերտների տարիքին և լեզվական գիտելիքներին համապատասխան: Ոչ բոլոր հարցերն են հարմար յուրաքանչյուր երեխային կամ պատանուն: Այդ մասին որոշումը կայացնում է (ընդունող) ուսուցիչն իր հայեցողությամբ:

Հարցաթերթիկը գծագրում է ռեսուրսային կողմնորոշման վերաբերյալ հիմնական պատկերը: Դրան համապատասխան պետք է փաստաթղթագրվեն աշխակերտների բոլոր լեզվական ռեսուրսները: 3-րդ բաժնում (հայրենի երկրում ստացած լեզվի ուսուցում) պետք է սահմանվի լեզվի հատուկ ոլորտային գործածությունը: Այդտեղ կարող են դիտարկվել բոլոր լեզվական հմտությունները (խոսք, ընթերցում, գրելու, լսելու կարողություն):

Հարցաթերթիկի հարցերից բացի տրվում են հարցեր նոր ներգաղթած երեխայի կամ պատանու դպրոցական կամ մասնագիտական նախկին փորձի, հետաքրքրությունների ու տաղանդների մասին իրենց իսկ մայրենի լեզվով: Դա թույլ է տալիս կցել աշակերտին այն ուսումնական խմբին, որը համապատասխանում է ոչ միայն լեզվական գիտելիքների ներկայիս մակարդակին, այլև աշակերտի մոտիվացիային և ներուժին:

Քյոլնի տարածքային կառավարման մարմնի կողմից հնարավոր է ստուգվեն հայրենի երկրում ստացած ատեստատները՝ դպրոցի ավարտման կամ միջին դպրոցի ավարտման հնարավոր ճանաչման համար:

([http://www.bezreg-koeln.nrw.de/brk\\_internet/leistungen/abteilung04/48/anererkennung/auslaendische\\_schulzeugnisse/index.html](http://www.bezreg-koeln.nrw.de/brk_internet/leistungen/abteilung04/48/anererkennung/auslaendische_schulzeugnisse/index.html))

Միջնակարգ դպրոցի ավարտման ատեստատի ճանաչման համար իրավասու է Դյուսելդորֆի տարածքային կառավարման մարմինը:

([http://www.brd.nrw.de/schule/schulrecht\\_schulverwaltung/Zeugnisanererkennung.html](http://www.brd.nrw.de/schule/schulrecht_schulverwaltung/Zeugnisanererkennung.html))

Նոր ներգաղթած աշակերտների դասավանդման համար անհրաժեշտ գրականության ցանկը, այդ թվում՝ ուսումնական ձեռնարկներն ու լրացուցիչ նյութերը, կարող եք գտնել ProDaZ կայքէջում հետևյալ հղումով՝ <https://www.uni-due.de/prodaz/>: